

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 7-րդ գումարման (2019-2021թվականներ) ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ.

1. Կայացած նիստերի քանակը կազմել է 115՝

- 1) Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 56-ը՝ 37 հերթական, 19 արտահերթ
- 2) և 59՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստեր՝
 - «Հայաստանի Հանրապետության 2018 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների
 - «Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների
 - «Հայաստանի Հանրապետության 2019 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների
 - «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների
 - «Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների

2. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել՝

- 1) **121 օրենքի նախագծի** (որոնցից՝ 15 օրենքների նախագծերի փաթեթներ)՝ ընդունվել են՝ 90, դուրս են եկել շրջանառությունից՝ 27, դեռևս չեն ընդգրկվել օրակարգում՝ 1, քննարկվել և քվեարկվել է 1-ին ընթերցմամբ՝ 3
- 2) **18 համաձայնագրի՝** հաստատվել են՝ 17, դուրս է եկել շրջանառությունից՝ 1
- 3) **6 հաղորդումների՝** հաստատվել է՝ 5, քննարկման ընթացքում է՝ 1

Ընդունված 90 օրենքից՝

- 1) 66 – Կառավարություն
- 2) 24 - ԱԺ՝
 - 14 – ԱԺ «Իմ քայլ» խմբակցության պատգամավորներ
 - 8 – ԱԺ ԼՀԿ խմբակցություն
 - 2 – ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր

3. Հանձնաժողովի նիստերում քննարկվել են՝

- 111 օրենքի նախագիծ
 - 18 համաձայնագիր
 - 6 հաղորդում՝
- 1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում (Գնաճի հաղորդում), 126.ՖՎ, 26.02.2019

- 2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում, 598.ՖՎ, 30.04.2020
- 3) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում, 956.ՖՎ, 29.04.2021
- 4) Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում, 140.ՖՎ, 20.05.2019
- 5) Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում, 635.ՖՎ, 01.06.2020
- 6) Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում, 989.ՖՎ, 01.06.2021 (քննարկվել է հանձնաժողովի նիստում, սակայն չի քննարկվել ԱԺ հերթական նիստում՝ քվորում չլինելու պատճառով)

➤ 20 տեղեկանք՝

- 1) Պետական բյուջեի ընթացիկ կատարողականների վերաբերյալ – 7
- 2) ԱԺ բյուջետային գրասենյակի հաշվետվությունների և հաղորդումների վերաբերյալ - 13

➤ 2 զեկույց՝

- 1) «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույց,
- 2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2020 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույց:

- 2 ծրագիր՝ ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ գիտակրթական, գործարար ու հասարակական կազմակերպությունների միջև 2019 թ. սեպտեմբերի 3-ին ստորագրված համագործակցության հուշագրի կողմերի 2020-2021 թվականների գործունեության վերաբերյալ:

4. Խորհրդարանական վերահսկողության շրջանակներում 2019 թվականի ապրիլի 9-ին Հանձնաժողովի կազմում ստեղծվեց հաշվեքննության և աուդիտի հարցերի ենթահանձնաժողով: Ենթահանձնաժողովը գումարել է 10 նիստ, որոնց ընթացքում ուսումնասիրել և առաջարկություններ է ներկայացրել Հաշվեքննիչ պալատի շուրջ 100 ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ: Ենթահանձնաժողովի առաջարկների հիման վրա Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները քննարկելու նպատակով հրավիրել է 6 համատեղ նիստ:

5. Հանձնաժողովը կազմակերպել է խորհրդարանական լսումներ հետևյալ 2 թեմաներով.

- «Պետական գնումների համակարգի հիմնախնդիրները և դրանց բարելավման ուղիները»
- «Վարկային քաղաքանությունը և ֆինանսական գրագիտության խնդիրները Հայաստանում»:

6. "Ազգային ժողովի կանոնակարգ" Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմիններում թափուր մնացած տեղերի համար պաշտոնատար անձանց թեկնածությունների առաջադրում, հանձնաժողովը 9 քննարկում է կազմակերպել և առաջարկել է ԱԺ 6 թեկնածություն (ԿԲ- 4 թեկնածություն, ՀՊ – 2 թեկնածություն):

7. Հանձնաժողովը, ԳՄՀԸ (GIZ) «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի հետ համագործակցությամբ, կազմակերպել է հետևյալ միջոցառումները /թվով 6/.

- 2019 թվականի ապրիլի 4-ին՝ «Հայկական ֆինանսական երկխոսություն Խորհրդարանական բյուջետային վերահսկողության ընթացիկ շեշտադրումները» թեմայով սեմինար,
- 2019 թվականի ապրիլի 11-ին Ե. Չարենցի տուն-թանգարանում. «Հայկական ֆինանսական երկխոսություն. խորհրդարանական բյուջետային վերահսկողության ընթացիկ շեշտադրումները» թեմայով,
- 2019 թվականի մայիսի 23-ին՝ «Խորհրդարանի բյուջետային վերահսկողության գործիքակազմ. արտաքին հաշվեքննություն» խորագրով աշխատաժողով,
- 2019 թվականի հոկտեմբերի 18-20-ը՝ «Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովների և ԱԺ հաշվեքննության և աուդիտի հարցերի ենթահանձնաժողովի դերը խորհրդարանի և Հաշվեքննիչ պալատի փոխհարաբերություններում» խորագրով աշխատաժողով,
- 2019 թվականի նոյեմբերի 8-10-ը՝ «Պետական պարտք, ծրագրային բյուջետավորում և կանանց և տղամարդկանց կարիքների զգայուն բյուջե» խորագրով աշխատաժողով,
- 2019 թվականի դեկտեմբերի 9-14-ը՝ ԱԺ պատվիրակության ճանաչողական այց Գերմանիա հետևյալ թեմաներով. Հաշվեքննիչ պալատի գործունեություն և բյուջետային գործընթաց:

Հանձնաժողովը մասնակցել է նաև ԳՄՀԸ (GIZ) կողմից իրականացվող Գերմանիայի դաշնային կառավարության «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագրի փակման արարողությանը, որը տեղի է ունեցել 2020 թվականի մարտի 2-ին Երևանի պետական կամերային թատրոնում (Երևան, Մաշտոցի, 58):

8. Հանձնաժողովը իր կողմից 2019 թվականի ապրիլի 9-ին ընդունած որոշման համաձայն՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 14.00-ին ՀՀ ԱԺ 334 սենյակում և նոյեմբերի 5-ին ժամը 15.00-ին ՀՀ ԱԺ 123 սենյակում, կազմակերպեց իր և նախապես գրանցված շահագրգիռ կառույցների (բուհական հաստատություններ, հետազոտական կենտրոններ, հասարակական ու մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների՝ թվով 9) միջև երկկողմ «Համագործակցության հուշագրերի» ստորագրման արարողություն: Գրանցված կառույցները հետևյալն էին՝

- «Տնտեսական իրավունքի կենտրոն»
- ՀԱԱՀ աշխատակազմ
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
- «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպություն
- «Կապիտալ ըքստինթինգ ցենտր» ՍՊԸ
- Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
- Հայաստանի պետական կառավարման ակադեմիա
- «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների»ասոցիացիա
- Տնտեսական զարգացման նախաձեռնությունների կենտրոն

9. Հանձնաժողովը 7-րդ գումարման գործունեության ընթացքում քաղաքացիներից ստացել է 49 դիմում-բողոք և 1 հանրագիր («Ոչ վարկային թալանին» կոլեկտիվ նախաձեռնության հանրագիր), որոնց տրվել է պատշաճ պատասխաններ: Հանրագրի պատասխանը քննարկվել և հաստատվել է Հանձնաժողովի նիստում (և հանրագիրը, և Հանձնաժողովի պատասխանը ներկայացված են ԱԺ կայքի հանձնաժողովի էլեկտրոնային էջում):

10. Հանձնաժողովը 7-րդ գումարման գործունեության ընթացքում կազմակերպել է շուրջ 70 քաղաքացու ընդունելություն:

11. ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ԱԺ կայքի հանձնաժողովի էլեկտրոնային էջում: